Վերապատրաստող կազմակերություն

ՀՀ ԿԳՄՍ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Սովորողի արժեհամակարգի ձևավորումը համագործակցային մեթոդի կիրառմամբ

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՈՒՍՈՒՑԻՉ՝

ՀԵՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴՊՐՈՑ

ԶՈԼԱՔԱՐԻ ԱԼՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ

Մարտունի-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....3-4

2.Գրական ակնարկ.....5-7

3.Փորձարարական հետազոտություն.....8-10

3.1 Խմբի նկարագիրը.....8

3.2 Փորձարարական դասեր.....9-12

3.2.1. Փորձարարական դաս-1..... 9-12

3.2.2.Փորձարարական դաս-2.....12

4.Վերլուծություն.....13-14

5.Գրականության ցանկ.....15

6.Հավելված.....16-24

1.Դասապլան-1.....16-18

2.Դասապլան-2.....19-24

Ներածություն

Գրականությունը հոգևոր և բարոյական արժեքների հսկայական շտեմարան է: Այն մի վիթխարի երևույթ է, որն ստեղծվել է մարդու հանճարի կողմից և նրա մտքի պտուղն է: Գրականությունը աշխարհը հասկանալու միջոց է, օգնում է մեզ հասկանալ ինչը լավն է և ինչը՝ վատ: Նրա միջոցով մենք կարողանում ենք տեսնել մարդու ներքին գեղեցկությունը, սովորել հասկանալ և գնահատել:

Գրականությունը ոգու և անհատականության դաստիարակության հզոր աղբյուր է: Գեղարվեստական պատկերների բացահայտման միջոցով գրականությունը մեզ տալիս է բարու և չարի, ճշմարտության և կեղծիքի հասկացություններ: Ոչ մի պատճառաբանություն չի կարող այնպիսի ազդեցություն ունենալ մարդու մտքի վրա, որքան ճշմարտացիորեն գծված պատկերը: Հենց սա է գրականության ուժն ու նշանակությունը: Այն ընդլայնում է մարդու հորիզոնը, նրան սովորեցնում մտածված ընթերցում, հասկանալ այն պատկերացումները, որոնք հեղինակը արտահայտում է պատկերների միջոցով: Գրականությունը մեզ ցույց է տալիս ինքնակատարելագործման ուղիներ: Յուրաքանչյուր գեղարվեստական պատկեր, ինչպես գիտենք, միևնույն ժամանակ իրականության և գրողի գաղափարախոսության արտացոլումն է: Բավական չէ միայն գրական ստեղծագործության հետ ծանոթանալը: Մենք պետք է փորձենք ներթափանցել ծրագրի գաղտնիքների մեջ, իմանալ ստեղծագործության ստեղծման նախապատմությունը: Գրականությունը զարգացնում է մարդու միտքն ու զգայարանները: Նա մեր ուսուցիչն է, կյանքի ուղեցույցը: Մտքերը բառերով արտահայտելու ունակությունը մարդու տարբերակիչ հատկանիշն է: Բառերը հայելին են, որոնք հստակ արտացոլում են հոգևոր զարգացման աստիճանը: Այն ամենը, ինչ դրսից մտնում է մեր հոգի, դրոշմված է մեր զգացմունքների, մտքերի և հենց դրանք արտահայտելու ձևում: Տարբեր գրողների մոտ կյանքի արտացոլանքը տարբեր է, քանի որ գրականությունը բազմակողմանի է: Այն կարող է շատ լուրջ ազդեցություն ունենալ իր ընթերցողի վրա: Գիտականորեն ապացուցված է, որ գեղարվեստական գրականությունն ունակ է էապես ազդելու զանգվածային գիտակցության վրա՝ ստեղծելով ուղեցույցներ մարդկանց զարգացման համար: Եվ եթե գրականությունն իսկապես գեղեցկություն է սովորեցնում, սովորեցնում է ճանաչել

բարին և չարը՝ ներկայացնելով մարդկության լավագույն մտքերի էությունը, ապա այսօր այն կարծես ամենաարդյունավետ միջոցներից մեկն է, որը կարող է այս աշխարհը դարձնել ավելի լավը, ավելի բարի: Մեր ցավոտ կողմերից մեկն այն է, որ այսօրվա դպրոցականների մեծ մասը գրականություն չի կարդում, և դա ազդում է նրանց աշխարհայացքի, արժեքային կողմնորոշումների և բարոյականության վրա: Այսպիսով մենք բազմիցս համոզվել ենք, որ գրականությունն ու գրքերը մեր կյանքում խաղում են ամենակարևոր, անբաժանելի դերը՝ դառնալով մեր հավերժական ընկերները և օգնելով մեզ ամեն ինչում: Մենք պետք է նշենք նաև, որ գրականության ուսուցչի դերը մեծ է ու կարևոր մարդկային կյանքում: Գրականության ուսուցչը պետք է օգնի աշակերտներին ավելի լավ հասկանալ այն իմաստը, որը գրողները և բանաստեղծները ցանկանում են փոխանցել իրենց սերունդներին իրենց իսկ ստեղծագործությունների միջոցով: Ուսուցիչը դպրոցականներին ներկայացնում է մարդկային աշխարհը և նրանց միջև հարաբերությունների ամբողջ բազմազանությունը: Երբ մարդ մեծանում է, նրա կարդացած գրքերը իր հետ դառնում են «չափահաս»: Ես իմ անձնական օրինակից ելնելով՝ կասեմ, որ իրոք այդպես է: Օրինակ՝ Շառլոթ Բրոնտե-ի «Ջեյն Էյր»-ը իրականում երեք անգամ կարդացել եմ կյանքի տարբեր ժամանակահատվածներում: Եվ այդ գիրքը երեք անգամն էլ տարբեր ձև եմ հասկացել և տարբեր ազդեցությունն է ունեցել ինձ վրա: Այնպես որ ուսուցիչը պետք է լինի դպրոցականների ուղեկցորդը դեպի գրքերի աշխարհ:

Գրականություն առարկան առավել կարևոր է դպրոցում ուսումնասիրելու համար: Այն արվեստ է, հասարակական գիտակցության ձև, մարդու ստեղծագործ աշխատանքի և հոգևոր մշակույթի տեսակ, իրականության ճանաչման յուրահատուկ եղանակ: Արվեստը իրականությունն արտացոլում է գեղագիտորեն, գեղարվեստական կերպարների միջոցով: Դպրոցում գրականության ուսուցիչը պետք է օժտված լինի ստեղծարար ոգով, քանի որ գրականության ամեն մի դասաժամ ուսուցչից պահանջում է այնպիսի նուրբ մոտեցում, որ կարողանա յուրաքանչյուր աշակերտի մեջ սերմանել սեր դեպի արվեստը, դեպի գրականությունը: Ոսոցիչն է այն ուսուցանող փարոսը, ում օգնությամբ աշակերտը կկարողանա հասկանալ, արժևորել ու գնահատել գեղարվեստական ցանկացած ստեղծագործություն, լինի դա արձակ թե չափածո:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ բավականին լայն է: Այն մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Եթե մենք գերապատվությունը տանք այս թվարկվածներից որևիցե մեկին, դա կլինի ոչ մանկավարժական մոտեցում: Արժեհամակարգը լիակատար է և ավարտուն բոլոր ներառնված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Այդ իսկ պատճառով նրա ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը՝ մասնավորապես հ. լեզվի և գրականության: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ի դեպ ասենք, որ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա կարող են ազդել տարբեր գործոններ՝կինոն, թատրոնը, համացանցը, հեռուստատեսությունը,ավանդական միջոցները, տարիքայինը, միջանձնային հարաբերությունները (ծնողներ, ուսուցիչներ, ընկերներ և այլն): Սովորաբար աշակերտը այս ամենից կարող է վերցնել և դրականը, և բացասականը: Ուստի արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ինչու չէ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների

ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ, որոնք իրենց վատ ազդեցությունն են թողնում աշակերտի ինքնամտածողության վրա: Այս ամենն հաշվի առնելով՝ դպրոցը պետք է փորձի աշակերտին զերծ պահել դրանցից: Կրթությունն իր մեջ ներառում է երեք հիմնական ու կարևոր խնդիրներ. 1.Ի՞նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), 2.Ինչի՞ համար սովորեցնել (կրթության նպատակներ), 3. Ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդներ): Այսօրվա դպրոցի ուսուցչին անհրաժեշտ է ոչ միայն դասավանդվող առարկայի խոր և բազմակողմանի իմացություն, այլև դասավանդման նպատակների, խնդիրների, դրանց կենսագործմանն ուղղված եղանակների, ձևերի ու միջոցների նպատակահարմար ընտրություն կատարելու կարողություն և հմտություն: Ուսուցման մեթոդը այնպիսի մի ուղի է, մի ձև, որը հնարավորություն է տալիս այդ ուղիով ու ձևով հասնել նպատակին: Այն պարբերաբար կիրառվում է և մեծ ազդեցություն թողնում մանկավարժական աշխատանքի ուղղվածության վրա: Ուսուցման մեթոդը սովորողի և սովորեցնողի համագործակցությունն է ուսումնական միջավայրում, որն էլ իրականացնում է նպատակները: Այդ իսկ պատճառով դասավանդողը պետք է լինի փորձված, իմանա տարբեր մեթոդներ՝ ուսումնական գործընթացը էլ ավելի հաջող ու հետաքրքիր կազմակերպելու համար: Նա այնքան հմուտ պետք է լինի, որ ուսուցման գործընթացում կարողանա ճիշտ ընտրել մեթոդները և դրանք ճիշտ կիրառել: Այլապես մենք կունենանք այնպիսի պատկեր, որ երբեք չենք հասնի մեր նպատակին: Բացի այդ սովորողն էլ պետք է իմանա, թե ինչ պետք է անի և ինչու: Համագործակցային ուսուցման ժամանակ խմբերը տարասեռ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում: Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկապակցվածության ապահովումը: Այս ուսուցման տարրերը ըստ Ջոնսոնների հինգն են. 1. Դրական փոխկապակցվածություն—խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու,

աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են համատեղ հասնելուն ընդհանուր նպատակին: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումները օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:
2. Դեմ առ դեմ խթանող փոխազդեցություն---խմբի անդամները համագործակցում են, փոխանակում տեղեկություններ, կարծիքներ, վերլուծում են տեղեկությունը, կատարում հետադարձ կապ, ընդհանուր նպատակին հասնելու համար քաջալերում են և աջակցում միմյանց:

3. Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն---խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, իր գաղափարներով ու մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:
4. Սոցիալական հմտություններ---խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը:
5. Խմբային գործընթաց---խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

Համագործակցային ուսուցման ընթացքում խմբի առավել կարողություններով օժտված աշակերտները օգնում են թույլերին ամեն օր՝ դասերի ընթացքում և դասամիջոցներին, քննարկում են հանձնարարությունները և օգնում միմյանց՝ կատարելու տնային աշխատանքները: Նրանք ունեն պատասխանատվություն՝ լսել և օգնել խմբի թույլ և հետ մնացած անդամին: Համագործակցային ուսուցման ժամանակ ամբողջ դասարանը ակտիվորեն ներգրավված է ուսուցման մեջ, իսկ նոր գիտելիքը մշակվում և յուրացվում է հենց աշակերտների միջոցով:

Համագործակցային ուսուցման մեթոդներն են.

1. Աշակերտների թիմային առաջադիմություն
2.Խճանկար

3. Շրջագայություն պատկերասրահում

4. Երեք բանալի և մեկ կողպեք

5. Հինգրոպեանոց ազատ շարադրանք

6. Խմբային հետազոտություն

Համագործակցային ուսուցման ժամանակ ուսուցչի հիմնական աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքների վերահսկումն ու ուղղորդումը: Յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակները խիստ բազմազան են, ինչը ենթադրում է նաև, նպատակից կախված, մեթոդի ձևափոխման հնարավորություն: Ցանկացած դաս և դասարան եզակի է: Նույն դասը նույն պլանով երկու դասարաններում լրիվ տարբեր է լինում: Համագործակցային մեթոդների առավելությունն այն է, որ աշակերտակենտրոն է, այսինքն ոչ թե ուսուցիչն է պատրաստի գիտելիք մատուցում, այլ աշակերտին մասնակից է դարձնում այդ գիտելիքի ձեռքբերմանը: Այդ մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային հետազոտական աշխատանքներ կատարելու բազում հմտություններ:

Փորձարարական հետազոտություն

ԽՄԲԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1.Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան հ 2 միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում: Այս դասարանում սովորում են 25 աշակերտ՝ 5աղջիկ և 20 տղա: Դասարանում սովորողներն ունեն տարբեր առաջադիմություններ և հմտություններ: Գրականություն առարկան ուսումնասիրում են շաբաթական 2 դասաժամով: Ասեմ նաև, որ մայրենի առարկան ես այս դասարանին դասավանդել եմ 5-րդ դասարանից: 7-րդ դասարանից գրականությունը ուսումնասիրում են որպես առանձին առարկա:Բացի այդ նաև դասարանի դասղեկն եմ և շատ լավ գիտեմ յուրաքանչյուր աշակերտի գիտելիքները, կարողություններն ու հմտությունները: Դասարանի 5 աշակերտների մոտ սկսեցի նկատել անտարբերություն դասի և, առհասարակ, ամեն ինչի նկատմամբ: Աշակերտների անունները լրիվ չեմ գրի, կնշեմ միայն անվան առաջին տառերը՝Ս-ն, Ռ-ը, Ա-ը, Դ-ը, Մ-ն: Նույնիսկ նրանցից երկուսը՝Ռ-ը և Ա-ը խուսափում էին մասնակցել դասերին: Զգում էի՝ նրանք առիթ են փնտրում, որ թույլտվություն վերցնեն ու չմասնակցեն դասերին: Ուրեմն ինձ լուրջ աշխատանք էր անհրաժեշտ՝ այս ամենը շտկելու համար : Հետազոտական աշխատանքից առաջ նախ նպատակ էի դրել, օգտագործելով համագործակցային ուսուցման տարբերակը, նրանց ներգրավել դասապրոցեսի մեջ, փորձել աշխատեցնել, նրանց մեջ ձևավորել և զարգացնել որոշ արժեհամակարգեր, ինչն էլ կնպաստեր նրանց ճիշտ կողմնորոշմանը, մտածելակերպին: Ընդամենը երկու հետազոտական դասից հետո ես կարողացա հասնել իմ առջև դրված նպատակներին և ունենալ բավականին լավ վերջնարդյունքներ: Իհարկե ասեմ, որ աշխատանքս այնքան էլ հեշտ չէր, քանի որ ընթացքում նաև հանդիպեցի դժվարությունների: Հետազոտական աշխատանքս որոշեցի իրականացնել գրականության ժամին, քանի որ անձի արժեհամակարգի ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը՝ հատկապես գրականության: Մինչ դասը ուսուցիչը 1. Ընտրում է նյութերը, 2. Հստակեցնում մոտեցումները,3. Գնահատում է նյութի կարևորությունը, 4. Պարզում է խնդիրներն ու նպատակները, դասի մեջ ներառում է մտածողության հաջորդական զարգացում:

Մտածողության տեսակները կարող են լինել հետևյալը՝1. Գտնել դասանյութի հիմնական իմաստը 2. Բերել դասին առնչվող օրինակներ կյանքից 3. Համեմատել կամ հակադրել դասանյութում եղած մտքերը: Դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է ունենա չափորոշիչներին և նպատակներին համապատասխան վերջնարդյունքներ, որպեսզի հստակ իրականացնի գնահատումը: Այս հետազոտական աշխատանքիս համար նախընտրել եմ վերցնել արձակ և չափածո ստեղծագործություններ, որպեսզի աշակերտները ավելի խորն ու հստակ պատկերացում կազմեն իրենց առջև դրված նախադրյալների մասին: Աշխատանքս իրականացնելու եմ երկու դասի ուսումնասիրության ժամանակ՝ Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» և Դ. Դեմիրճյանի «Ավելորդը»: Կփորձեմ այս դասերի միջոցով արժևորել հայրենիքը, հայրենասիրությունը, մարդասիրությունը, անձի հանդեպ ունեցած խիղճը: Դասերի ընթացքում փորձարկվել է խմբային,համագործակցային և էլի ուրիշ մեթոդներ, պարզելու համար, թե որքան արդյունավետ են այս մեթոդները նպատակին հասնելու համար:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ

3. 2.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 1. Ե. Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը Նախ դասն սկսեցի անդրադարձով, հարցադրումներով վեր հանվեցին նախորդ դասերին ունեցած գիտելիքները: Հարցադրումների ավելի շատ հարցնում էի այդ աշակերտներին՝ պարզելու նրանց պատրաստվածությունն այդ դասին: ԽԻԿ համակարգի կիրառմամբ խթանման փուլում կիրառվեց պրիզմա մեթոդը: Ես այդ հինգ աշակերտներին առանձին քարտեր բաժանեցի, որոնց մեջ նրանք պետք է նշեին երեք բառ կամ տեղանուն, որոնք կբնութագրեին կամ կվերաբերվեին միայն Հայաստանին: Իհարկե նրանք շատ արագ կարողացան գրել արդեն իսկ իրենց ծանոթ տեղանուններ: Նույնիսկ երեքից շատ էին գրել: Հետաքրքիրն այն էր, որ հինգն էլ իրարից անկախ գրել էին Արարատ բառը: Աշխատանքը շատ ոգևորեց նրանց, հատկապես, որ այն տարբերակված աշխատանք էր: Որպեսզի արդյունքն ավելի նկատելի լիներ, ես մտածված արդեն նրանցից յուրաքանչյուրին ընդգրկել էի տարբեր խմբերում, որ կարողանան մյուսների հետ համագործակցել: Իմաստի ընկալման փուլում ամեն խմբում ընդգրկված աշակերտը կարդաց բանաստեղծության մի քառատողը, իսկ խումբը, միասին, մեկը մեկին լրացնելով, վերլուծեց, մեկնաբանեց այն սեփական բառերով: Խմբերը կատարեցին բառային աշխատանք: Իսկ այդ հինգին ես հանձնարարեցի իրենց գրած տեղանուններով կազմել նախադասություններ ու տեսնել արդյոք դրանցից կա բանաստեղծության մեջ: Նրանք սիրով աշխատում էին իրենց ընկերների հետ: Իսկ ընկերներն էլ սովորել սովորեցնելու մեթոդով օգնում էին նրանց: Կշռադատման փուլում քառաբաժան մեթոդը կիրառվեց ամեն մի խմբի հանձնարարվեց լրացնել աղյուսակը՝ կազմված համապատասխան հարցերից: Ես այս փուլում նպատակահարմար համարեցի նրանց հարցերը չփոխել, քանի որ արդեն գիտեի, որ նրանք այդ աշխատանքը սիրով են կատարում: Ճիշտ է Ա-ն և Ս-ն գրավոր պատասխանեցին երկու հարցի, բայց վերջում խմբի մյուս անդամների օգնությամբ բանավոր պատասխանեցին նաև մյուս հարցերին: Իհարկե ամեն փուլին տրամադրվեց համապատասխան ժամանակը: Դասի ավարտին լսեցին Չարենցի խոսքերով գրված երգը և հանձնարարվեց տնային աշխատանք: Տարբեր բնույթի աշխատանքներ կատարելով՝ ես հասա նրան, որ կարողացա այդ աշակերտներին ներգրավել դասապրոցեսի մեջ՝ հաշվի առնելով նրանցից յուրաքանչյուրի կարողություններն ու

հմտությունները: Հայրենասիրությունն ու հայրենական արժեքները աշակերտների մոտ այնպես տպավորվեցին, որ ամեն մեկն սկսեց իր անհատական կարծիքն արտահայտել ստեղծագործության վերաբերյալ: Նույնիսկ Դ-ը և Մ-ին հաջորդ դասաժամին ցանկություն ունեցան երգել բանաստեղծությունը: Իսկ երեքը՝ Ս-ը, Ա-ը և Ա-ն հետազոտական աշխատանք էին կատարել և համացանցից դուրս էին գրել տեղեկություններ իրենց քարտերի վրա գրված Հայաստանի տեղանունների մասին:

<u>3. 3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ 2</u> Դ.Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը Դասի նպատակներին հասնելու համար կիրառել եմ այնպիսի մեթոդներ, որոնք համարել եմ ճիշտ և տեղին: Այս թեման աշակերտներն ուսումնասիրում են երեք դասաժամով (ըստ մասերի): Ամեն դասի սկիզբ սկսել եմ անդրադարձով, հարցադրումներով և յուրաքանչյուր հաջորդ կապել եմ նախորդի հետ: Դասի մանրամասն նկարագրությունը ներկայացված է դասի պլանում: Խմբային և համագործակցային աշխատանքի միջոցով կարողացա պասիվ աշակերտներին ներգրավել դասապրոցեսի մեջ: Դասն սկսեցի հարցադրումներով, պատասխանները շատ հետաքրքիր էին: Հետո մտագրոհ անելով ավելի շատ ուզեցա լսել այդ հինգ աշակերտների պատասխանները: Նրանցից երեքը կազմեցին բառակապակցություններ: Ըստ դասապլանի՝ ես ամեն մի աշխատանքի ժամանակ հատուկ ուշադրություն եմ դարձրել այդ աշակերտներին, ուղղորդել եմ, բացատրել քայլ առ քայլ, որպեսզի ապահովեմ նրանց ներգրավվածությունը: Ճիշտ է, ամբողջ ընթացքում նրանք կարողացան ինչ-որ բան անել, բայց վերջին ամփոփիչ դասաժամի կշռադատման փուլում նրանք մասամբ էին պատասխանել հարցերին: Ես հինգրոպեանոց ազատ շարադրանք հանձնարարեցի միայն նրանց, որի արդյունքում լսեցի հետաքրքիր մտքեր: Տնային աշխատանք հանձնարարել էի գրել նամակ իրենց նախընտրած որևէ կերպարին: Հաջորդ օրը կարճ հարցադրումներով և տնային աշխատանքի ընթերցումով հասկացա, որ մեթոդը ունեցել է իր դրական արդյունքը: Նրանք նյութը բավականին լավ յուրացրել էին, պատկերացրել հեղինակի ասելիքը: Հավելեմ նաև, որ դասղեկի ժամին «Մարդասիրություն» թեման էր, իսկ նրանք ցանկություն ունեցան թատերական ձևով ներկայացնել պատմվածքից մի երկու դրվագ, որտեղ ավելի ցայտուն կերպով էր դա արտահայտված: Իմ օգնությամբ, ուղղորդությամբ, ուժեղների հետ համագործակցելով աշխատանքը լավ արդյունք ունեցավ:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարող եմ փաստել, որ աշակերտների արժեհամակարգի ձևավորման կարողությունների բացահայտման համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի կողմից ճիշտ մեթոդի ընտրություն: Նպատակներիս հասնելու ռազմավարությունն այն է, որ կարողացա հարցադրումներով, համագործակցային ուսուցմամբ արձանագրել յուրաքանչյուր սովորողի դինամիկան: Արդյունքներից պարզ դարձավ, որ նյութն ավելի մնայուն գիտելիքներ կտա աշակերտին, եթե այն մատուցվի ճիշտ քայլերով: Նյութի յուրացումը, կրկնելը, ամրապնդելը, կիրառելը պետք է լինի անընդհատ և շարունակական: Պետք է ուսուցիչը կարողանա բացահայտել տվյալ աշակերտների մեջ այնպիսի կարողություններ, որ ապահովի նրանց ներգրավվածությունը դասին՝ եթե ոչ լիարժեք, գոնե մասամբ: Ասեմ, որ յուրաքանչյուր դասի ժամանակ աշակերտները լավ պատրաստված էին և ոգևորված: Պասիվ աշակերտների մոտ նկատեցի առաջխաղացում: Նրանցից երկուսը նույնիսկ փորձել էին նկարել ստեղծագործությունից որոշ դրվագներ՝ արժևորելով որոշ արժեքներ: Ուժեղ աշակերտները կարողացան հնարավորինս ընդգրկել նրանց դասապրոցեսի մեջ: Ավելացնեմ նաև, որ խմբային ուսուցումը կազմակերպելիս ես ամեն մեկին ընդգրկել էի առանձին խմբերում և, բնականաբար, խմբերի մյուս անդամների մեջ մեծ ոգևորություն էր առաջացել իրենց թույլ ընկերներին ավելի շատ բան սովորեցնելուն: Իսկ սա արդեն ձևավորում է սոցիալական արժեքներ: Օրինակ՝ ես մտքերն ազատ արտահայտելու հարցադրման միջոցով այդ հինգ աշակերտների մոտ բացահայտեցի այնպիսի կարողություններ, որոնք չէի նկատել մինչև այդ դասերը:Կամ երգելու կարողությունը, որ մինչ այդ չէի նկատել: Ես խոստացել էի մեկ նիշ ավել գնահատել այն աշակերտին, ով կկարողանա երգի տեսքով ներկայացնել դասը: Կամ փորձարարական երկրորդ դասի ժամանակ հանձնարարել էի գրել մի պատմություն, որտեղ իրենք օգնել են ծերերին, անդամալույծի, մեծերին կամ երեխաների: Նրանցից ամեն մեկը գրել էր այդ առաջադրանքը՝ շեշտը դնելով մարդասիրության վրա: Այս դասը շատ մատչելի եղավ, քանի որ պատերազմի սարսափելի տեսարանները տեսած ու լսած աշակերտը հաստատ կհասկանա, կպատկերացնի ու ասելիք կունենա՝ զուգորդելով այսօրվա իրականությունը Դեմիրճյանի նկարագրած ժամանակաշրջանի հետ: Հետազոտության ընթացքում նաև վեր են հանվել այն

ձախողումները, որոնց հանդիպեցի: Բայց ասեմ նաև, որ ձեռքբերումներս ավելի շատ էին, քան ձախողումները: Ուստի հետագա գործունեությանս ընթացքում կփորձեմ շտկել դրանք և ունենալ ավելի մեծ հաջողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Wordpress.com

1. https://gayane99 wordpress.com
2. (https://multiurok.ru/files/

4. hamagortsaks-ayin-owso

5.wts-man-gagap-arakhos-owt-y.html

6. wikipedia.org https://hy.m.wikipedia.org

7.armedu.am https://forum.armedu

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասի պլան-1

Ուսուցիչ՝ Հերմինե Վարդանյան

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ		Կիսամյակ	1	Դասարան	7-րդ
Թեմա՝	Ե.Չարենց << Ես իմ անուշ Հայաստանի>> բանաստեղծությունը						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, տետր, գրիչ, համակարգիչ,Չարենցի և Արարատ լեռան նկարները						
Դասի նպատակը՝	Արտահայտիչ կարդալ բանաստեղծությունը Գաղափար տալ տաղի և << Տաղարան>> շարքի մասին Կարևորել բանաստեղծության հայրենասիրական կողմը Վեր հանել արտասանելու, արժևորելու, ճանաչելու ,գնահատելու, կարողությունները						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները՝	Աշակերտը կկարողանա՝ Արտահայտիչ կարդալ և անգիր արտասանել բանաստեղծությունը Դուրս հանել մակդիրները Ներկայացնել շարքը և շարքում զետեղված բանաստեղծությունները Տարբերակել հայրենասիրական ստեղծագործությունները Ճանաչել,գնահատել և արժևորել հայրենական արժեքները						
Գործողություններ (ժամ/տևողություն) 45ր	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուուցիչ		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդներ	

մուտք, ներկա բացակա/3ր/ սկիզբ/5-7ր/ ընթացք /25-30ր/ ավարտ /5ր/ Ադրադարձ ԽԻԿ	Աշակերտները լսում են, կազմում նախադասություններ, ներկայացնում են բանաստ.վերլուծում,պատասխանում առաջադրված հարցերին, կատարում լեզվական առաջադրանք	կիրառում է ԽԻԿ համակարգը, պրիզմա մեթոդը: Աշակերտներին ցուցադրվում է նկարը,այն ներկայացվում որպես ազգի պահպանման և հավերժության խորհրդանիշ Գրատախտակին գրվում է Հայաստան բառը: Պրիզմայի ավարտին աշակերտները կկազմեն մեկական նախադասություն՝ իրար կապելով առաջին ու վերջին բառերը: Ուսուցիչը դասախոսություն մեթոդը կիրառելով,կխոսի բանաստ. մասին, կընթերցի կամ կարտասանի այն ու կհանձնարարի ներկայցնել սեփական բառերով: Կշռադատման փուլում աշակերտները կլրացնեն աղյուսակը՝ բաղկացած 4	Ինչ է տաղը, ինչ զգացողություններ ունեցաք բանաստ. լսելիս, ինչ հույզեր ու զգացմունքներ առաջացան,3.դու ինչի հետ կհամեմատես բանաստեղծությունը, 4.բանաստ. որ տողը կդարձնեիք նոր վերնագիր: 5.Բանաստեղծությանը ովքեր և ինչ գնահատական են տվել ու ինչի հետ համեմատել	Պրիզմա Դասախոսություն Քառաբաժան

		հարցից: Դասի վերջում լսեցին բանաստ. խոսքերով գրված երգը Հովհ.Բաղալյանի կատարմամբ:		
Տնային աշխատանք	Դասը սովորել անգիր, փորձել պատկերել բանաստեղծությունը նկարի տեսքով			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ —----------

Դասի պլան-2

Ուսուցիչ՝ Հերմինե Վարդանյան

Առարկա՝	Գրականություն	Ամսաթիվ	10.09.2022	Կիսամյակ	1-ին	Դասարան	7-րդ
Թեման՝	Դ.Դեմիրճյանի<< Ավելորդը>> պատմվածքը 3 դասաժամ						
Օգտագործվող նյութեր՝	Դասագիրք, գրիչ, տետր, ՏՀՏ գործիքներ, քարտեզ						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ դասից ծանոթացել էին Դեմիրճյանի կենսագրությանը, գիտեն նրա ապրած ժամանակաշրջանը, ստեղծագործությունները: Այս 3 դասաժամերի ընթացքում կուսումնասիրեն պատմվածքը						
Դասի նպատակը՝	Դաս առաջին Գաղափար տալ գրական ժանրերի մասին, իմանալ՝ ինչ է պատմվածքը Արտահայտիչ ընթերցել և ներկայացնել որոշ հատվածներ Դուրս հանել հատվածից անծանոթ բառերը, բացատրել Բնութագրել գլխավոր կերպարներին, մեկնաբանել նրանց գործողությունները Իմանալ պատմվածքում տեղի ունեցող իրադարձությունները Դաս երկրորդ Արտահայտիչ ընթերցել հատվածը Դուրս հանել անծանոթ բառերը, բացատրել Հասկանալ պատմվածքի հիմնական գաղափարը Ներկայացնել կերպարները սկզբում և վերջում Հիմնավորել վերնագրի և դիպաշարի համապատասխանությունը Դաս երրորդ Արտահայտիչ ընթերցել հատվածը Դուրս հանել հատվածից անծանոթ բառերը, բացատրել Ձևավորել տեքստի հիմնական ասելիքն առանձնացնելու կարողություն Ներկայացնել Հաճի աղայի հոգեբանական դրաման						
Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, ուսուցումը տեղի ունեցավ							

Վերջնարդյունքներ՝	Դաս առաջին-Կկարողանա Տարբերակել գրական ժանրերը, իմանալ՝ ինչ է պատմվածքը Արտահայտիչ կարդալ և ներկայացնել տրված հատվածի դիպաշարը Հասկանալ անծանոթ բառերի նշանակությունը Առանձնացնել կերպարներն իրենց գործողություններով Ներկայացնել Առաջին համաշխարհային պատերազմը պատմվածքում, դրա անդրադարձը հայ ժողովրդի վրա, և այն կապել այսօրվա հայ իրականության հետ Քննարկել հատվածը Դաս երկրորդ-Կկարողանա Արտահայտիչ ընթերցել և ներկայացնել հատվածը Հասկանալ անծանոթ բառերի նշանակությունը Բնութագրել Հաճի աղային և համեմատել ընտանիքի մյուս անդամների հետ Ներկայացնել Հաճի աղային փախի ժամանակ Դաս երրորդ-Կկարողանա Արտահայտիչ ընթերցել հատվածը Հասկանալ անծանոթ բառերի նշանակությունը Ամբողջացնել դիպաշարը Ըմբռնել պատմվածքի գաղափարը Ներկայացնել Հաճի աղային փախից հետո Գնահատել Հաճի աղայի կատարած արարքը
Ուսուցչի զարգացման ընթացիկ թիրախներ	Նպատակներին հասնելու ռազմավարությունը

Խմբային ու համագործակցային աշխատանքի միջոցով աշակերտների առավելագույն ներգրավվածության ապահովում	Նախատեսում եմ հարցադրումներով արձանագրել յուրաքանչյուր սովորողի դինամիկան

Գործողություններ (ժամ,տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն Ուսուցիչ	Հիմնական ստուգումներ Հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին
Մուտք, ներկա_բացակա (3ր) Սկիզբ(5_7ր) Ընթացք(25_30ր) Ավարտ ժ(5ր) Անդրադարձ	Աշակերտները վերհիշում են նախորդ դասը Պատասխանում են հարցադրումներին Ընթերցում են, լսում, ներկայացնում: Հարցերին պատասխանելով՝ վեր են հանում հարցերի մեջ ներառնված խնդիրները Արտահայտում են իրենց կարծիքը ստեղծագործության գաղափարի վերաբերյալ	Նախ կատարում եմ անդրադարձ, հետո հանձնարարում եմ ավելորդ բառով կազմել բառակապակցություններ: Կազմակերպում մտագրոհ ավելորդ բառով: Ավելորդ մարդ կարո՞ղ է լինել: Արդյոք ձեր շրջապատում կա՞ այնպիսի մարդ, ում համարում եք ավելորդ: Պատերազմի մասին խոսելուց հետո դարձյալ հարց եմ տալիս: Եթե հայտնվեիք նման խուճապային իրավիճակում, ի՞նչ իր կվերցնեիք ձեր հետ Հարցադրումներից հետո անցնում եմ նյութի ընթերցմանը, բացատրում անծանոթ բառերի իմաստները Ամեն հատվածի ընթերցում անում եմ կանխագուշակման մեթոդով.աշակերտները կկանխատեսեն՝ ինչ է լինելու: 1-ին դասի ժամանակ կկատարեմ խմբային աշխատանք, ամեն մի խումբ կբնութագրի կերպարները, միասին	Ի՞նչ է պատմվածքը Ինչ՞ գիտեք առաջին աշխարհամարտի մասին Ո՞րն է պատմվածքի գաղափարը Ո՞րն է հեղինակի ասելիքը Բացատրիր / Աստծու համար հոգին հոգի է/ արտահայտությունը Ինչու՞ է պատմվածքը վերնագրված << Ավելորդը>> Չափանիշներ՝ Տրամաբանական խոսքի կառուցում Վերլուծական մտքի զարգացում Մարդկային կյանքի արժևորում, գնահատում

		կքննարկեն, իսկ կշռադատման փուլում քառաբաժան մեթոդը կիրառելով կպատասխանեն հարցերի՝ Ի՞նչ եմ տեսնում Ի՞նչ ձայներ եմ լսում Ի՞նչ գույներ եմ տեսնում Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Հաճի աղայի փոխարեն 2-րդ դասի իմաստի ընկալման փուլում կօգտագործեմ վենի դիագրամ՝ Հաճի աղայի և Սրբունի կերպարների համեմատական վերլուծությամբ: Վերջին դասի կշռադատման փուլում կտամ հետևյալ հարցադրումները. Ի՞նչ սովորեցրեց ձեզ պատմվածքը Ի՞նչ տրամադրություն առաջացրեց Ո՞ր գույնն է գերակշռում պատմվածքում Ինչպե՞ս կցանկանայիք, որ ավարտվեր պատմվածքը Ո՞րն է կյանքի ամենաթանկ ու մեծագույն հարստությունը	
Տնային աշխատանք			

Դաս 1.Փորձիր 5-6 նախադասությամբ բնութագրել քեզ շրջապատող հարուստ մարդկանց: Ի՞նչը կուզենայիր որ նրանց մեջ փոխվեր

Դաս 2. Դուրս հանել բարբառային բառերն ու օտարաբանությունները

Դաս 3. Կազմել աղյուսակ և պատասխանել հարցերին
1.Ի՞նչն է կյանքում կարևոր
2. Ի՞նչն է կյանքում ավելորդ

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ —----------